

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՂՔԱՀԱՐՄԱՆ ՈՌԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գ. Ս. ՉԱԼՍՏՅԱՆ

Անցումային հասարակություններին բնորոշ տնտեսական կորուստները և սոցիալական զրկանքներն ու աղետները հանրահայտ են և համակողմանի լուսարանված: Ավանդական հասարակությունների անցումը շուկայական համակարգին հիմնականում չալանավորված և չգիտակցված գործընթաց էր: Մասնավոր սեփականության վրա հիմնված և ազատ շուկայի պայմաններին կողմնորոշված կապիտալիստական հաստատությունների զարգացումը ինքնաբոխ էր, և անգամ այսօր դժվար է հստակորեն սահմանել այդ համակարգի սկիզբը: Այն իրավական, տնտեսական, մշակութային, քաղաքական, կրոնական և, վերջապես, տեխնոլոգիական գործոնների բարդ հյուսվածք է, որը ներկայում ևս շարունակում է գործառնել համեմատական բարձր արդյունավետությամբ:

Արևմուտքի տնտեսական, քաղաքական և իրավաստեղծ երկարատև պատմությունից հայտնի օրինակները՝ և՛ կորուստների (ագրարային հեղափոխության արյունալի դեպքերը Անգլիայում, լուդիթթների շարժումը), և՛ ձեռքբերումների (XIX դ. սկզբի տնտեսական վերելքը) առումով, պետք է որ ուսանելի լինեին անցման ուղին ընտրած հետխորհրդային հասարակությունների համար: Կարող էր ուղեցույց լինել նաև շուկայականից վարչաֆրամանային տնտեսությանը անցնելու 1920-30-ական թվականների սեփական փորձը: Ողջամտությունը հուշում էր հաշվի առնել թեկուզ Զինաստանի ժամանակակից փորձը, որը, 1960-ական թվականների «կուլտուրական հեղափոխության» դասերը հիշելով, շուկա էր մտնում «պլանային բարեփոխումների» ուղիով: Պատմական փորձը հուշում էր, որ գոյություն ունեցող որևէ հասարակական համակարգից անցումը մեկ այլնի իրականություն է դարձել բացառապես առկա համակարգին բնորոշ կապերի և միջոցների գործադրմամբ: Շուկայական համակարգի ձևավորման ժամանակաշրջանի մերկանտիլիստական քաղաքականությունը խարդախված էր ավանդական հասարակությանը հատուկ վարչաֆրամանային սկզբունքներին: Կենտրոնացված պլանային համակարգի կառուցումը հաջողություն ունեցավ ոչ թե «ազմական կոմունիզմի» հաստատմամբ, այլ շուկայական սկզբունքների գերակայություն ունեցող ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականության) շնորհիվ:

Թվում է, թե գոյություն ունեցող հարուստ փորձը և պատմագիտական բազմաթիվ ուսումնասիրությունները ուղենշելու էին հետխորհրդային հասարակությունների արդյունավետ անցումը դեպի շուկա՝ նվազագույնի հասցնելով վերափոխման ծախսերը և զրկանքները: Իրականում անցման ընթացքը և արդյունքները այնպիսին են, որ հասարակության մեջ գնալով հզորանում է ծագած հիմնահարցերը հույճիսկ հետընթացի միջոցով լուծելու մտայնությունը: Նպատակ հայտարարված մարդու՝ նյութական բարեկեցության և կյանքի որակի անը ենթադրող հասարակության դեմոկրատացման և տնտեսության ազատականացման ծրագրերի ներկա արդյունքները առհասարակ հարցականի տակ են դրել կատարված վերափոխումների անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Քաղաքական և տնտեսական զարգացումների հայտնի բեկումը Հայաստանում ընթացավ աննախադեպ տնտեսական անկմամբ, աննախադեպ ինչպես անկման չափերով, այնպես էլ լճացման (ստազնացիա) տևականությամբ: Հայաստանի Հանրա-

պետությունում հաստատված կացությունը շատ ավելի մոտ է Արևմուտքում XVI-XVIII դդ. կատարված իրադարձություններին՝ արդյունաբերական հեղափոխությամբ պայմանավորված զանգվածային գործազրկություն և աղքատություն: Իսկ տնտեսական անկումն ավելի խորն է, քան մեծ դեպրեսիայի տարիներին էր (1929-1932 թթ.): Պաշտոնական վիճակագրության հրապարակած ցուցանիշը՝ ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) կրճատում 2.5 անգամ, վերափոխումների սխալ ուղու ընտրության վկայություն է: Եվ ի վերջո, որ առավել կարևորն է, հասարակության ընդհանուր կացությունը շատ բաներով կրկնում է «կարտոֆիլի սովի» հետևանքները Իոլանդիայում 1840-1846թթ., երբ բնակչության թվաքանակը սովամահության և միգրացիայի հետևանքով 9 մլն-ից նվազեց մինչև 6.5 մլն-ի: Հայաստանում անցած տասը տարիների ընթացքում տնտեսական պայմանների և բնակչության թվաքանակի համապատասխանեցումը ընթանում է գրեթե նույն մեխանիզմով, ինչպիսին դեռևս XVIII դ. վերջին նկարագրել է անգլիացի տնտեսագետ Թ. Ռ. Մալթուսը՝ նկատի ունենալով անբաղաքակիրթ երկրները կամ հին ժամանակները:

Տնտեսական բացառիկ անկումը ՀՀ-ում անխուսափելիորեն հանգեցրել է զանգվածային աղքատացման, երբ բնակչության զգալի մասը գորյկ է կենսամվազագույնը պահպանելու հնարավորությունից: Ընդ որում, աղքատացման հասարակական անդրադարձը առավել չափով սրված է Հայաստանում բնակչության ունեցվածքային ծայրահեղ բևեռացմամբ²: Վերջինս, ինքնին, եկամտի «արդարացի բաշխման» ավանդական հիմնահարցին հրատապություն է հաղորդում, իսկ հարստության «արդարացի վերաբաշխման» կոչերը ավելի հեղափոխական են դառնում: Անատրկելի է, որ ընթացիկ եկամտի վերաբաշխման միջոցով հնարավոր է մեղմել աղքատության հիմնահարցի սրությունը, բայց դրանով անկարելի է վերացնել աղքատության տնտեսական պատճառները: Գոյություն ունի մի հանգամանք ևս, որը նվազեցնում է եկամտի վերաբաշխման գործոնի կարողությունը աղքատության հաղթահարման գործում: Դա ընթացիկ եկամտի և առհասարակ հարստության բաշխման առկա կարգը հաստատած իշխող ուժի անխուսափելի դիմադրությունն է: Այդ ուժը քաղաքական անդորրի ժամանակահատվածում տիրապետում է իշխանական լծակները՝ քաղաքական, տնտեսական, ուժային և այլն, իսկ բաշխման նոր կարգ հաստատելու յուրաքանչյուր փորձ բախվում է նրա անգիշում դիմադրությանը: Բնական է, որ այդ ուժը խաղաղորեն չի հաշտվի իր մենաշնորհային եկամտի կորստի հետ: Հասարակությունների պատմությունը վկայում է, որ ցանկացած ցնցումային՝ հեղափոխական լուծում, որքան էլ որ մեծ լինի նրանով պայմանավորված փոփոխության անհրաժեշտությունը, ժողովրդի համար դառնում է ծանրագույն, երբեմն նաև մահացու փորձություն: Եվ վերջապես, առանց նսեմացնելու վերաբաշխման դերը, մասնավորապես ընթացիկ եկամտի, մոռացության պետք չէ մատնել այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում վերաբաշխումը նպաստում է խնամակալական հոգեբանության ծավալմանը: Խոսքը, իհարկե, վերաբերում է աշխատունակներին, որոնց զանազան հանգամանքներով նպաստառու դառնալը նվազեցնում է տնտեսական ակտիվության դրդապատճառների ուժը:

Աղքատության վերացման հիմնական և գլխավոր ուղին տնտեսական աճն է: Այսպես 1995-ից՝ կառավարության (այժմ՝ ազգային) վիճակագրական ծառայությունը հրապարակել է ՀՆԱ աճը լուսաբանող հետևյալ ցուցանիշները (աճը նախորդ տարիների նկատմամբ տոկոսներով)՝ 1995 թ.՝ 7.0, 1996 թ.՝ 5.8, 1997 թ.՝ 3.3, 1998 թ.՝ 7.3, 1999 թ.՝ 3.3, 2000 թ.՝ 6.0: Իսկ 2001 թ. համար հայտարարված ցուցանիշը մոտ է 10%-ին: Ենթադրվում է, որ ՀՆԱ-ի նման աճ ունեցող հասարակությունը պետք է էապես

¹ Տե՛ս "Антология экономической классики", М., 1993, էջ 9-22:

² Հավաստի դիտարկումների արդյունքները վկայում են, որ օրինակ՝ երևանաբնակ ամենամասնապահով բնակչության 20%-ին բաժին է ընկնում եկամուտների 3%, իսկ ամենամասնապահով 20%-ին՝ 60%-ը (տե՛ս Լ. Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետության դերը, Եր., 2001, էջ 36):

³ Տե՛ս «Հայաստան, տնտեսական միտումներ», հունվար-մարտ 2001 թ., էջ 122:

մեղմած լինել աղքատության հիմնախնդիրը: Անառարկելի է նաև, որ այդ ժամանակահատվածում բնակչության թվաքանակը չի ավելացել, ինչը ինքնին պետք է նպաստել աղքատության կրճատմանը: Սակայն նույն ազգային վիճճատայության տվյալներով աղքատությունը շարունակել է աճել՝ 1996 թ. աղքատության մակարդակը (%-ներով, բնակչության թվաքանակում) եղել է 54.37 %, իսկ 1998-1999 թթ. 55.05%⁴: Եթե կասկածի տակ չառնենք ներկայացված ցուցանիշների հավաստիությունը և իրատեսությունը, ՀՆԱ-ն աճում է, բնակչության թիվը մնում է անփոփոխ, և հակառակ դրան՝ աճում է աղքատության մակարդակը, ապա ստացվում է, որ ազգային արդյունքի բաշխումը ավելի է բևեռացվում: Սակայն բոլորովին այլ միտումներ են բացահայտում «Հայաստանի սոցիալական միտումները» տեղեկագրում բերված աղքատությունը լուսաբանող մյուս ցուցանիշները:

Մասնավորապես, նշված ժամանակահատվածում պակասել է «շատ աղքատների» քանակը, որի հետևանքով նվազել է աղքատության ամենատարիմ մակարդակում կենտրոնացված աղքատների հարաբերական մեծությունը՝ աղքատության սրությունը: Բարելավվել է նաև աղքատության խորությունը բնորոշող ցուցանիշը (աղքատությունից դուրս գալու համար անհրաժեշտ եկամտի չբավարարող մեծությունը): Նշված երեք ցուցանիշների փոփոխությունները հետևյալն են՝ 27.67 %-ից՝ 22.91%, 11.1%-ից՝ 9.0% և 21.5%-ից՝ 19.0%⁵: Բացահայտ իրարամերձ միտումներ ներկայացնող ցուցանիշների գոյության հիմնական պատճառներից մեկը, անկասկած, տնտեսության մեջ ստվերային մեծ հատվածի առկայությունն է: Վերջինս գնահատվում է ամբողջի նկատմամբ 30 -50%-ի սահմաններում:

Աղքատության ցուցանիշները հաշվարկված են տնային տնտեսությունների բյուջեների ամբողջացված հատուկ ընտրանքային հետազոտությունների հիման վրա, ուստի շատ ավելի հավաստի են ու իրական: Այստեղից եզրակացությունը մեկն է. աղքատության ցուցանիշների փոքր-ինչ բարելավման գործոնը ոչ թե ՀՆԱ-ի աճն է, այլ բնակչության թվաքանակի կրճատումը: Բացի այդ, բնական է, որ ստվերային հատվածի ցանկանցած «լուսավորում» մեծացնում է ՀՆԱ ցուցանիշը, սակայն ազգային արդյունքի իրական մեծությունը մնում է անփոփոխ: Եվ դա լավագույն դեպքում, որովհետև այդ միջոցով բացահայտվում է առկա՝ արդեն ստեղծված, ազգային արդյունքի մաս կազմող եկամուտը: Բացառված չէ, և ավելի իրատեսական է թվում, որ «վիճակագրական աճը» հարուցի անկում: Ժամանակակից Հայաստանում, տնտեսության անկատար կառուցվածքով և իրավական դաշտից դուրս տնտեսական ու վարչական լուծումների գերակայությամբ, որ առավել որոշիչ է, ստվերային հատվածի հարկազանց եկամտի հաշվին շատ դեպքերում ապահովվում է լեզալ հատվածի գործունեությունը: Հետևաբար, «լուսավորման» մինչ այժմ կիրառվող եղանակների գործադրումը հետապնդվող կազմակերպությանը զրկում է գործի շարունակականությունը ապահովող միջոցներից:

Նման իրավիճակի համընդգրկությունը «արտոնյալ» գործարարներին թույլատրվում է խրախուսվում է իշխող ուժի կողմից, իսկ մնացյալներին թելադրվում է գոյատևման անհրաժեշտությամբ՝ հարկադրական մուտք «ստվեր» անհավասար մրցակցությանը դիմակայելու համար: Հարկային վերահաս «բարեփոխումների» բացակայության քիչ թե շատ երկար ժամանակահատվածում հաստատվում է յուրօրինակ հավասարակշիռ վիճակ, երբ ոչ արտոնյալ տնտեսավարողները, հարմարվելով իրենց առաջարկված պայմաններին, շարունակում են գործառնել: Իսկ ամեն մի նոր միջամտություն, թեկուզ պատճառաբանված լավագույն նպատակներով, խափանում է այդ գործունեությունը ամբողջապես կամ, ավելացնելով ծախսերը, սահմանափակում է մանր և միջին գործարարության ընդլայնումը:

Մեր եզրակացությունների հավաստիությունը անառարկելի է դառնում, երբ համեմատվում են 1998 և 2001 թթ. պետական ռեգիստրում գրանցված տնտեսավարող

⁴ Բերվում է ըստ «Հայաստանի սոցիալական միտումները» տեղեկատվական-վերլուծական տեղեկագրի, դեկտեմբեր 2001թ., էջ 7:

⁵ Նույն տեղում:

սուրբեկոնների թվաքանակները: Այսպես, անհատական ձեռնարկությունների թիվը կայունաբար կրճատվել է՝ 10558-ից հասնելով 8386-ի: Նույն ձևով կրճատվել է ընտանեկան ձեռնարկությունների թիվը՝ 766-ից հասնելով 600-ի, լիակատար տնտեսական ընկերակցությունների՝ 2138-ից 1532-ի, արտադրական կոոպերատիվների՝ 6007-ից 5832-ի, գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությունների՝ 322-ից մինչև 261-ի⁶: Հայ մարդու ձեռնարկատիրական ունակությունների դրսևորման ամենադյուրին և մատչելի այս ձևերի կրճատումը գործարարության պայմանների վատթարացման հետևանք է, որի աղբյուրը պասիվ դրամավարկային քաղաքականության պայմաններում հիմնականում կառավարության հարկային բացասական ներգործությունն է: Ձեռնարկատիրական ունակությունների սահմանափակումը արտադրական ներուժի կորստի ներքին էական պատճառներից մեկն է:

Շուկայական համակարգի գործունեության մասին իրական պատկերացումների ավանդույթի բացակայությունը ևս պատճառ է, որ մասնավոր հատվածը և անհատները ցանկանում են հարկերը չվճարել, բայց կառավարությունից ստանալ սոցիալական նվազագույնի ապահովման երաշխիք: Այս հանգամանքի անտեսումը և ստվերային հատվածի գոյությունը միայն հարկային մամլիչով պատճառաբանելը թերի կդարձնեն ստվերային հատվածի լուսավորման ցանկացած քաղաքականություն:

Հասարակությունների առջև դրված ընդհանուր նպատակների՝ տնտեսական աճ, բարեկեցություն, լրիվ զբաղվածություն և այլն ու Հայաստանի Հանրապետությունում իրական գործընթացների արդյունքների անհամատեղելիության սկզբնապատճառները թաքնված են ինչպես որդեգրված՝ անվանապես մոնետարիստական, տնտեսական քաղաքականության սկզբունքներում, այնպես էլ իրականում գործադրվող կառավարման ձևերի և եղանակների մեջ: Քանի որ հասարակությանը «դրսից» տրված, այսինքն՝ արտածին պայմանները, օրինակ՝ մասնակի շրջափակումը, մախապես հայտնի են և կայուն, ուստի դրանց վրա կառուցված պատճառաբանությունները անպտուղ են և պակաս արդյունավետ: Դա պայմանավորված է դրանց վրա ամմիջականորեն ներգործելու և վերափոխելու մեր հասարակության սահմանափակ հնարավորություններով: Կենտրոնական խնդիրը ներքին պատճառների բացահայտումն է:

Սկսած 1994 թ. դեկտեմբերից՝ ՀՀ-ում իրագործվում է ՄԱԿ-ի ֆինանսական կազմակերպությունների հանձնարարականներով մշակված մի քաղաքականություն, որի «գլխավոր նպատակը կայուն տնտեսական աճի... անհրաժեշտ պայմանների ստեղծումն է, ի հաշիվ հետագա կայունացման և կառուցվածքային բարեփոխման»⁷:

Ժողովրդական տնտեսության կազմալուծմանը նախորդած քառամյա ժամանակաշրջանի համեմատությամբ սա առաջընթաց քայլ էր: Առաջընթաց էր, քանի որ առաջին անգամ փորձ էր արվում տնտեսական գործընթացների կառավարմանը միասնական մոտեցում ցուցաբերել՝ մոնետարիստական սկզբունքներից ելնելով: Իհարկե, այսօրվա դիրքերից բավականին դյուրին է և անգամ գայթակղիչ քննադատել ներկա վիճակը⁸: Նախ՝ առարկայորեն մոնետարիստական սկզբունքների վրա կառուցված անցման ծրագրերի իրագործելիությունը չի կարող բավարար լինել զարգացած և նոր ձևավորվող շուկայական տնտեսություններում առկա պայմանների անհամապատասխանության հետևանքով: ԱՄՆ-ում 1950-ական թվականներին ձևավորված դասական այս նոր ուղղությունը կառուցված է առաջին հերթին ամերիկյան տնտեսության, այդ թվում նաև ինստիտուցիոնալ հաստատությունների հենքի վրա: Իսկ նրա հավաստիությունը

⁶ Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն:

⁷ Հայտարարություն տնտեսական քաղաքականության մասին, «Կառավարություն և կենտրոնական բանկ», Եր., 1994, էջ 1:

⁸ Դեռևս 1995թ. սկզբին, վերլուծելով այդ ծրագիրը, իբրև գլխավոր թերություն մատնանշել էինք զբաղվածության սահմանափակումը և առաջարկել տնտեսական աճը ապահովող մեկ այլ մոտեցում (տե՛ս «Պայքար», 1995 թ., № 1):

ապահովվում է նաև համաշխարհային տնտեսության մեջ ԱՄՆ-ին ամրագրված քա-
ցառիկ դիրքով: ԱՄՆ-ի պայմաններում, 1970-ական թվականներից սկսած մինչև դա-
րավերը, կառավարության միջատության ամենաարդյունավետ և անաչառ ձևը, իս-
կապես, փողի զանգվածի փոփոխության միջոցով տնտեսական ակտիվության կար-
գավորումն է: Եվ բնական է, որ հավատարիմ մնալով *laissez faire* սկզբունքին՝ կառա-
վարությունն ուղղակի չի միջամտում մասնավոր հատվածի գործունեությանը՝ համա-
բերով դա ապակայունացնող գործոն:

Շուկայական մեխանիզմների և հաստատությունների նորագոյացման պայման-
ներում անցումային տնտեսության նկատմամբ մոնետարիստական սկզբունքների
«ուղղափառ» կիրառումը նվազագույնի է հասցնում կառավարության կազմակերպիչ
դերը տնտեսական աճի պայմանների ստեղծման գործում: Իսկ՝ եթե տնտեսության
կայունության չափանիշ է ընտրվում ազգային արժույթի փոխարժեքը, ապա կապի-
տալի ազատ շարժի և կապակցված փոխարժեքի դեպքում դրամավարկային քաղա-
քականությունը հանգում է միայն փոխարժեքի հաստատունության պահպանմանը:
Տնտեսական մյուս խնդիրները, որոնց լուծումը հակասում է այդ պահանջներին, ստո-
րադասվում են՝ թողնվելով դեպքերի պատահական ընթացքին: Իսկ այդ պատահա-
կանությունները բավականին կանխատեսելի են⁹:

Տնտեսական օրենսդրությունը ևս արտերկրյա պատրաստական խորհրդատու-
ների հսկողությանը կաղապարվում է այդ սկզբունքների հիման վրա: Խորհրդա-
տվությունների արդյունավետության անբավարար աստիճանի կարևորագույն պատ-
ճառներից մեկը, անշուշտ, տեղական պայմանների ոչ ճշգրիտ ներկայացումն է ար-
տերկրյա փորձագետներին, որի հետևանքով նրանց եզրակացությունները չեն բխում
իրականության պահանջներից: Բացառված չէ նաև նրանց անբավարար մասնագի-
տական որակավորումը: Արդյունքում ստացվում են խորհրդատվություններ և կան-
խատեսումներ, որոնք մեծացնում են հասարակության կորուստները, իսկ կառավարու-
թյուն-խորհրդատուներ հարաբերությունները թևակոխում են փոխադարձ մեղադ-
րանքների և ինքնադատարացումների փուլը: Մասնավորապես, Արժույթի միջազգային
հիմնադրամը 1999թ. Ռուսաստանի համար կանխատեսել էր ՀՆԱ կրճատում 7.5-7.8 %,
իսկ այն աճեց 3.2 %-ով, կամ 1998 թ. ճգնաժամից հետո Ասիայի որոշ երկրների համար
կանխատեսում էր աճ ընդամենը 2-3 %, իրականում այն գերազանցեց 10 %-ը¹⁰: Օտտ
հաճախ նման պայմաններում ստացվում են արտաքննապես ազատական սկզբունք-
ների համասեռ, բայց գործադրման դեպքում անխուսափելիորեն կամայականությունն-
ներով կիրարկվող իրավատնտեսական լուծումներ:

Իրողությունն է, որ որպես «ազատականացում» կամ «բարելավում» ներկայաց-
վող իշխանությունների միջամտությունները տնտեսությանը ՀՀ-ում շատ ավելի ա-
նարդյունավետ են, քան շուկայական լուծումները կամ նույնիսկ պլանաբարմանա-
յին որոշումները: ՀՀ-ում ներկայումս հաստատված կացությունը ներկայացվում է որ-
պես քաղաքական և տնտեսական կայուն վիճակ: Իրականում այն իշխող ուժի կող-
մից մարդկանց և տնտեսության վրա ներագդման լծակների բացարձակ տիրապե-
տության հաստատումն է և դրանց վերաբաշխման համար հրապարակային պայքա-
րի բացակայությունը:

Աղքատության ընդլայնումը փաստում է, որ հակառակ վիճակագրական աճի,
ՀՀ տնտեսությունը գտնվում է հարատև լճացման և կազմալուծման վիճակում: Տըն-
տեսության անկման և ձևափեղման ընթացքը առավել ամբողջական են բացահայ-
տում կառուցվածքային տեղաշարժերը: Արդյունաբերության և շինարարության տե-
սակարար կշիռները, սկսած 1990թ., կրճատվել են մոտ 2 անգամ, մինչդեռ նույն ժա-
մանակահատվածում արտադրության անփոփոխ և նույնիսկ նվազող ծավալների

⁹ Դեռևս 1999 թ. փետրվարին մի վերլուծականում փոխարժեքի ինքնանպաստակ ամ-
րագրման կապակցությամբ կանխատեսել էինք 2001 թ. տարեվերջին Արգենտինայում կա-
տարված տնտեսական աղետի հնարավորությունը՝ այն անվանելով «կործանվող ամբարտա-
կի էֆեկտ» (տե՛ս «Ազգ», փետրվար 4, 1999 թ.):

¹⁰ Տե՛ս "Мир за неделю", No 18, 2000, էջ 5:

դեպքում աճել է գյուղատնտեսության բաժինը: Կառուցվածքային միտումները վկայում են, որ շարունակվում է տնտեսության ձևախեղումը, որի հետևանքով առկա արտադրական ռեսուրսները կորցնում են իրենց տնտեսական արժեքը: Երկարատև անգործության և կառուցվածքային տեղաշարժերի հետևանքով հասարակության տնօրինած հիմնական կապիտալը և տեխնոլոգիաները անդարձելիորեն կորստի են մատնվել: Այժմ արդեն դրանց վերագործարկումը տնտեսապես անհիմաստ է, և շատ ավելի արդյունավետ է նոր կարողությունների ստեղծումը և տեխնոլոգիաների ձեռքբերումը: Վերջինս, արդեն, լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջն է դնում: Արտադրական գործոնների մյուս բաղադրիչը՝ բնական ռեսուրսները, շահագործման դադարեցման կամ անարդյունավետ շահագործման հետևանքով ևս զգալիորեն կորցրել են իրենց թե՛ բնական և թե՛ տնտեսական արժեքը: Երկարատև գործազրկության հետևանքով անէացել է նաև աշխատանքային ռեսուրսների նշանակալի մասը: Մի քանի տարի շարունակ չաշխատող կամ ոչ իր մասնագիտությամբ աշխատող մարդը անխուսափելիորեն կորցնում է իր որակավորումը, որի արդյունքում, սոցիալական կորուստներից զատ, անհետանում են կրթության և որակավորման ձեռքբերման վրա ներդրած միջոցները:

Հայաստանի տնտեսության համար հրապարակված գործազրկության մակարդակի ցուցանիշը՝ 11 %, իրականում չի արտացոլում աշխատանքային ռեսուրսների օգտագործման աստիճանը, այլ քողարկում է եռակի բարձր գործազրկությունը: Զբաղվածների թվաքանակը, որը հրապարակում է պաշտոնական վիճակագրությունը՝ 1999թ. ավելի քան 1.3 մլն մարդ, մոտ է 1988թ. համապատասխան ցուցանիշին՝ 1.36 մլն մարդ: Ընդ որում, նույն ժամանակահատվածում ազգային արդյունքը կրճատվել է ավելի քան 2 անգամ: Այսպիսի անհեթեթ վիճակի պատճառը պարզապես վիճակագրական կեղծարարությունն է:

Այսպիսով, տնտեսական աճի առաջարկի գործոնների տասնամյա վայրընթացը պահանջարկի գործոնների ոչ իրազեկ կառավարման վերադրմամբ հարուցել է խոր տնտեսական անկում, որի արդյունքում ՀՆԱ-ն 1 ընչի հաշվով ՀՀ-ում 1989 թ. 5.546 դոլարից իջել է մինչև 501.1դ. 2000թ.¹¹:

Զարգացումների նման ընթացքը թելադրում է տնտեսական աճի ապահովման ուղիները, որոնք այնքան ակնհայտ են և պատմությամբ ստուգված, որ կրկնությունը յուրաքանչյուր հետազոտողի ենթարկում է ձանձրալի դառնալու վտանգին: Ինչևէ, տնտեսության վերելքի նախապայմանները սահմանվել են դեռևս Ա. Սմիթի կողմից, հանրահայտ են և պետք է դրվեն հասարակության կառավարման գործողությունների հիմքում. «Պետությունը բարբարոսության ստորին աստիճանից բարեկեցության վերին աստիճանին բարձրացնելու համար անհրաժեշտ են սոսկ խաղաղություն, ցածր հարկեր և հանդուրժողականություն կառավարման գործում, մնացած բոլորը կանի իրերի բնական ընթացքը: Բոլոր կառավարությունները, որոնք բռնի ձևով դեպքերի զարգացումը ուղղորդում են այլ ճանապարհով կամ էլ ձգտում են կանգնեցնել հասարակության առաջընթացը, հակաբնական են: Որպեսզի պահպանեն իրենց իշխանությունը, նրանք ստիպված են կեղեքելու և դաժանություններ անելու»¹²: Զարգացման երկու նախապայմանները՝ ժողովրդավարության հաստատում և բանական հարկերի սահմանում, զուտ ներքին են և քաղաքական կամքի դրսևորման դեպքում կձերբազատեն տնտեսական աճի մարդկային գործոնը:

Տնտեսական աճի սկիզբը ՀՀ-ում կարող է լինել առկա նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը հայ մարդու լիակատար տնտեսական ազատությունն ապահովելու միջոցով: Եվ առաջին քայլը պետք է դառնա շուկայական տնտեսությունների և հատուկ մասնավոր սեփականության ինստիտուտի

¹¹ Մեկ ընչի հաշվով 1989 թ. ՀՆԱ մեծությունը արևմտյան մասնագետները հաշվարկել են դեռևս ԽՍՀՄ-ի ժամանակ, երբ հասկանալի պատճառներով, ավելի հզոր էին ցուցանիշը նվազեցնելու շարժառիթները:

¹² А. Смит. Исследование о природе и причинах богатства народов. М., 1962, с. 501.

Ֆետևոդական իրագործումը, որն ի վերջո, առավելագույնս ավելացնելով մարդու ազատությունը, ապահովում է տնտեսական ակտիվության բարձր մակարդակ: Տընտեսական աճի հիմնական աղբյուրը ՀՀ-ում հայի բացառիկ ձեռնարկատիրական հատկանիշների դրսևորման և գործադրման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է: Մարդն է նյութական և ֆինանսական միջոցներին հաղորդում այն որակները, որով նրանք դառնում են արտադրական ռեսուրսներ: Դեռևս XVIII դ. վերջին Ի. Կանտի կողմից տրված հայի բնութագիրը դեռևս չի բովանդագրվել. «Հայերի մեջ գերակայում է ինչ որ հատուկ կարգի գործարար ոգի, և հատկապես, նրանք զբաղվում են փոխանակությամբ <...>: Սա մատնանշում է այդ ողջամիտ և աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագումը, <...> որը կարողանում է սրտաբաց ընդունելություն գտնել բոլոր ժողովրդների մոտ, սա ապացուցում է նրանց բնույթի գերազանցությունը»¹³:

Հնարավոր չէ նաև ժխտել, որ այս հատկանիշները պետական կառավարման բնագավառում, երբ այն դուրս է հասարակական վերահսկողությունից, հանգեցնում են կոռուպցիայի այնպիսի մակարդակի, ինչը ներկայումս առկա է և վտանգում է պետականությունը: Այս պատճառով ևս կառավարության տնտեսական դերի նվազումը և իրական ազատականացումը տնտեսական աճի պայմաններից են:

Գ. Տ. ԳԱԼՏՅԱՆ - *Корни бедности и пути ее преодоления в Республике Армения.* - Начало трансформационного процесса в РА сопровождалось беспрецедентным экономическим спадом, что привело к массовому обнищанию населения. Достоверные сведения свидетельствуют о том, что более половины населения РА живет за чертой бедности. Несмотря на официальные показатели экономического роста за последние несколько лет, уровень бедности не меняется. Номинально проводимая экономическая политика и полуправовая-полуклановая система реальной власти препятствуют поступательному развитию общества. Из факторов, способствующих экономическому росту в РА, главным является человеческий фактор - труд и частное предпринимательство. Реальная либерализация общества - вот основной путь быстрого экономического роста.

¹³ И. Кант. Антропология с практической точки зрения. Т. 6, М., 1996, с. 572.